

Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղարի ժ/պ՝

պարոն Գ. Եզանյանին

Հաշվետվություն

Ես՝ Գևորգ Հովակիմյանս, 2020 թվականի սեպտեմբերի 18-ից աշխատում եմ Կադաստրի կոմիտեի Գնումների կազմակերպման բաժնում՝ որպես փորձագետ: Կազմել եմ գնահատող հանձնաժողովների նիստերի արձանագրությունները, շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները, պայմանագիր կնքելու մասին որոշումները, կնքված պայմանագրի մասին հայտարարությունները և գնման ընթացակարգերի հետ կապված այլ անհրաժեշտ փաստաթղթերը: Պատրաստել եմ հրավերները՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, ընթացիկ տարում կազմել եմ տարվա գնումների պլանը, կազմել եմ գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի, գնումների համակարգող ձևավորելու մասին հրամանի նախագծերը, կատարել եմ գնման ընթացակարգերի հաշվետվությունների, գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերի լրացում PPCM համակարգում և ներկայացնում բաժնի պետի հաստատմանը, PPCM համակարգի իմ անձնական էջով լրացրել և բաժնի պետի հաստատմանն եմ ներկայացրել գնման ընթացակարգերի հաշվետվությունները, գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերը, գնահատել եմ գնման հայտի կազմման համապատասխանությունը Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: ԵԱՏՄ պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված procurement.am կայքում ռուսերեն և հայերեն լեզուներով հրապարակել եմ գնումների հայտարարությունը և հրավերը, հրավերներում կատարված փոփոխությունները և դրանց վերաբերյալ մասնակիցներին տրամադրված պարզաբանումները, գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և պայմանագրում կատարված փոփոխությունների մասին հայտարարությունները: Ապահովել եմ ԵԱՏՄ պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում պահանջվող փաստաթղթերի կազմումը ռուսաց լեզվով: 2020 թվականի նոյեմբերի 25-ին ստացել եմ գնումների համակարգողի որակավորում և այժմ կատարում եմ նաև գնումների համակարգողի գործառույթները: Կազմակերպել եմ Կադաստրի կոմիտեի կարիքների համար գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայությունների «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/10» և ախտահանման և

մակարայծների ոչնչացման ծառայությունների «ԿԿ-ԳՀԾԶԲ-21/12», վառարանների-
ծխնեղոյզների մաքրման ծառայությունների «ԿԿ-ԳՀԾԶԲ-21/16», անվտանգության
ապահովման ծառայությունների «ԿԿ-ԳՀԾԶԲ-21/19» ընթացակարգերը: Կազմել և գլխավոր
քարտուղարի հաստատմանն են ներկայացրել ընթացակարգերի հրամանները,
պատրաստել են հրավերները՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, կազմել և գնահատող
հանձնաժողովի հաստատմանն են ներկայացրել բացման և գնահատման
արձանագրությունները, պայմանագիր կնքելու որոշման, շահերի բախման բացակայության
մասին հայտարարությունները, պատրաստել են պայմանագրերի նախագծերը և դրանք
ներկայացրել Ֆինանսատնտեսագիտական և Իրավաբանական վարչությունների պետերին՝
համապատասխան եզրակացություն ներկայացնելու: Կազմակերպել են պայմանագրերի
ստորագրման գործընթացը, որից հետո պայմանագրերը մուտքագրել են համակարգ,
պատրաստել և հրապարակել են կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները:

Գլխավոր քարտուղարի ժ/պ՝ Գ. Եգանյան

Գ. Հովակիմյան

31.05.2021թ.

